Կարգապահական գործ թիվ ԿԳ-16054

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի հոկտեմբերի 03-ի թիվ 158-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/107-Ա
ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԵԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Կարեն Մեժլումյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Եգորյանին (արտոնագիր թիվ՝ 1187) և Դավիթ Գյուրջյանի (արտոնագիր թիվ՝ 1897) (այսուհետ միասին նաև՝ **Պատասխանողներ**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը.</u>**

02.03.2016թ. Պալատ մուտքագրվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև Դատարան)** դատավոր Նելլի Բաղդասարյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 29.02.2016թ. որոշումը **(այսուհետ՝ Որոշում)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով դատական քննության ընթացքում, 2016թ. փետրվարի 29-ին, ժամը 11.00-ին նշանակված դատական նիստի ժամանակ ամբաստանյալ Վադգեզ Գասպարին պառկել է հատակին, ինչից հետո նիստը նախագահողը նրա նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված սանկցիա՝ «նախազգուշացում» և հորդորել է պատշաճ դիրք զբաղեցնել դատական նիստի բնականոն ընթացքը շարունակելու նպատակով: Ամբաստանյալ Վարդգեզ Գասպարին որևէ կերպ չի արձագանքել նիստը նախագահողի գործողություններին շարունակելով պառկած մնալ դատական նիստերի դահլիճի կենտրոնում, որից հետո նիստը նախագահողը ամբաստանյալի նկատմամբ կիրառել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան՝ «նիստերի դահլիճից հեռացնելը»:

Որոշմամբ նշվել է, որ ամբաստանյալի պաշտպան Տիգրան Եգորյանը հայտարարել է, որ եթե դատարանը չթույլատրի Վ.Գասպարիին մասնակցել դատական նիստին, ապա ինքը և Դ.Գյուրջյանը կլքեն նիստերի դահլիճը:

Նիստը նախագահողը պաշտպաններին զգուշացրել է, որ չի թույլատրում հեռանալ

դատական նիստերի դահլիճից և իր օրինական կարգադրությունը չկատարելու դեպքում դատարանն իրավասու է կիրառել դատական սանկցիա, այդուհանդերձ, Տիգրան Եգորյանը ցուցադրաբար լքել է դատական նիստերի դահլիճը, իսկ Դավիթ Գյուրջյանը լռելյայն հետևել է նրան:

Որոշմամբ նշվել է, որ Դատարանը խորհրդակցական սենյակում քննության առնելով փաստաբան Տիգրան Եգորյանի և Դավիթ Գյուրջյանի դատական նիստում դրսևորած վարքագիծը, գտել է, որ վերջիններս խախտել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում ամրագրված իրենց պարտավորությունները, մասնավորապես, չենթարկվելով դատական նիստը նախագահողի օրինական կարգադրությանը ու չպահպանելով դատական նիստի կարգուկանոնը, մինչև ընդմիջում հայտարարելն առանց նախագահողի թույլտվության լքել են դատական նիստերի դահլիճը, ինչի հետևանքով դատական նիստը ձախողվել է:

Դատարանը գտել է, որ դատական նիստի դահլիճից հեռանալով փաստաբաններ Տ.Եգորյանը և Դ.Գյուրջյանն իրենց դատավարական իրավունքներից օգտվել են անբարեխղճորեն և անհարգելի չեն կատարել իրենց դատավարական պարտականությունները, ինչով և խոչընդոտել են դատական նիստի բնականոն ընթացքին ու անհարգալից վերաբերմունք են դրսևորել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ:

Դատարանը՝ վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով, 313-րդ հոդվածի, 314-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով և 314.1-րդ հոդվածով նախատեսված իրավական նորմերը, գտել է, որ փաստաբաններ Տ.Եգորյանին և Դ.Գյուրջյանին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունից ելնելով պետք է դիմել փաստաբանական պալատ:

Դատարանը 29.02.2016թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. *«Ամբաստանյալ Վարդգեզ Լիվանի Գասպարիի պաշտպաններ, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբաններ Տիգրան Եգորյանին /արտոնագիր N 1187/ և Դավիթ Գյուրջյանին /արտոնագիր N 1897/ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմել փաստաբանական պալատ:»:*

Դիմումին կից ներկայացվել է թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով 29.02.2016թ. դատական նիստի ձայնագրառման կրիչը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

10.03.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 86-Ա/ԿԳ-16054 որոշմամբ՝ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Տիգրան Եգորյանի և Դավիթ Գյուրջյանի նկատմամբ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 4.1 կետերի խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 11.03.2015թ. հանձնվել է Պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձ՝ Ռուբեն Բալոյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը գործը նախապատրաստելու ընթացում բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացրել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Պատասխանողները բացատրություն չեն ներկայացրել:

Պատասխանող Դավիթ Գյուրջյանը ներկայացրել է միջնորդություն նիստն իր և Տիգրան Եգորյանի բացակայությամբ քննելու մասին:

<u>3.3. Վկաների ցուցմունքները</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. **<u>Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին</u>**

Թիվ ԿԳ116-Ա/ԿԳ-16063 կարգապահական գործը նախապատրաստող՝ Ռուբեն Բալոյանը 10.05.2016թ. կազմել է եզրակացություն, համաձայն որի պաշտպաններ Տիգրան Եգորյանի և Դավիթ Գյուրջյանի դատական նիստերի դահլիճից առանց դատարանի թույլտվության հեռանալը բխել է վստահորդի շահերից: Պաշտպանները գործել են հարկադրաբար, որպեսզի այդ կերպ ապահովեն իրենց վստահորդի մասնակցությունը (ոչ միայն ֆիզիկական, այլ նաև գործուն, հաշվի առնելով, որ վերջինիս միջնորդությունն ըստ էության ավարտին չհասցվեց) հետագա դատական նիստերին: Պաշտպանները վստահորդի շահերի պաշտպանության կարևորությունից ելնելով՝ այդ կերպ փորձել են կանխել իրենց վստահորդի նկատմամբ թույլ տրված իրավունքի խախտումը, այսինքն գործել են ելնելով Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ կետին համահունչ, հաշվի առնելով, որ իրենց վստահորդի բացակայությամբ դատական նիստին մասնակցելը այս դեպքում կարող էր դիտվել որպես վստահորդի շահերին հակասող գործողություն:

Եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

11.05.2016թ. սույն կարգապահական գործը հանձնվել է պալատի Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 03.10.2016թ. ժամը 18:40-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված

լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով 29.02.2016թ. Դատարանը որոշում է կայացրել ամբաստանյալի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ նիստերի դահլիճից հեռացնելը:
2. Ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելուց հետո վերջինիս շահերի պաշտպան Տիգրան Եգորյանը հանդես է գալիս հայտարարությամբ, որի վերջում իր և մյուս պաշտպան Դավիթ Գյուրջյանի անունից հայտարարում է, որ առանց իրենց պաշտպանյալի վերաբերյալ քննվող դատական գործին մասնակցության, իրենք ևս չեն կարող մասնակցել գործի քննությանը:
3. Դատարանը լսելով Տիգրան Եգորյանի հայտարարությունը նշում է, որ պաշտպանների կողմից դատական նիստերի դահլիճը լքելը դիտվելու է որպես դատարանին չենթարկվել, դատական նիստերի բնականոն ընթացքը խոչընդոտել, ինչը հանգեցնելու է դատական սանկցիայի:
4. Փաստաբանները Դավիթ Գյուրջյանը և Տիգրան Եգորյանը առանց թույլտվության լքում են դատական նիստերի դահլիճը:
5. Դատարանը 29.02.2016թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. «Ամբաստանյալ Վարդգեզ Լիվանի Գասպարիի պաշտպաններ, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբաններ Տիգրան Եգորյանին /արտոնագիր N 1187/ և Դավիթ Գյուրջյանին /արտոնագիր N 1897/ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմել փաստաբանական պալատ:»:

Նշված փաստերը հաստատվում են թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով 29.02.2016թ. դատական նիստի ձայնային արձանագրության կրիչով, Դատարանի 29.02.2016թ. «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշմամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի 03.10.2016թ. տեղեկանքի համաձայն՝ Տիգրան Եգորյանը փաստաբանական գործունեության թիվ 1187 արտոնագիրը ստացել է 15.10.2011թ. և 2011-2016թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 3 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (ավարտված վարույթ) և առկա է 5 ընթացիկ վարույթ:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի 03.10.2016թ. տեղեկանքի համաձայն՝ Դավիթ Գյուրջյանը փաստաբանական գործունեության թիվ 1897 արտոնագիրը ստացել է 25.04.2015թ. և 2015-2016թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ առկա է 2 ընթացիկ վարույթ:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբաններ Տիգրան Եգորյանի և Դավիթ Գյուրջյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** *39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետով (Վարվելակերպի կանոնները դատարանում), որի համաձայն՝ փաստաբանը, *ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Նշված կանոնի վերլուծությունից բխում է, որ Փաստաբանը պետք է ենթարկվի դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին և հարգանքով վերաբերվի դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Նշված կանոնը վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ պաշտպանը պարտավոր է մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը:

Թիվ ԵՇԴ/0125/01/14 քրեական գործով 29.02.2016թ. տեղի ունեցած դատական նիստի ձայնագրությունը հետազոտելու արդյունքում պարզ է դառնում, որ փաստաբաններ Տիգրան Եգորյանն ու Դավիթ Գյուրջյանը դատական նիստերի դահլիճը լքել են առանց դատարանի թույլտվության: Սույն գործով պաշտպանական կողմի դատարանի կարգադրություններին չենթարկվելը ուղղակի պատճառական կապի մեջ է գտնվում Դատարանի որոշումների և նրա կողմից արձակած կարգադրությունների հետ: Այսպես, Դատարանը բազմիցս ընդհատելով և միջամտելով ամբաստանյալի միջնորդությանը ի վերջո հայտարարել է, որ թույլ է տալիս վերջինիս հանդես գալ միջնորդությամբ, որի համար նրան հատկացնում է 30 վայրկյան ժամանակ, որից հետո վերջինս պառկում է հատակին և չի ենթարկվում դատարանի պահանջներին ուղղված դատական նիստերի դահլիճում պատշաճ դիրք զբաղեցնելուն, որին հետևում է ամբաստանյալի նկատմամբ դատական սանկցիայի կիրառումը: Նախ դատարանը ամբաստանյալի նկատմամբ որպես դատական սանկցիա կիրառում է նախազգուշացում, որից հետո տեսնելով, որ ամբաստանյալը շարունակում է մնալ պառկած դիրքում և չի ենթարկվում Դատարանի պահանջներին՝ Դատարանը որոշում

է կայացնում ամբաստանյալի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ նիստերի դահլիճից հեռացնելը: Ամբաստանյալին դատական նիստերի դահլիճից հեռացնելուց հետո վերջինիս շահերի պաշտպան Տիգրան Եգորյանը հանդես է գալիս հայտարարությամբ, որի վերջում իր և մյուս պաշտպան Դավիթ Գյուրջյանի անունից հայտարարում է, որ առանց իրենց պաշտպանյալի վերաբերյալ քննվող դատական գործին մասնակցության, իրենք ևս չեն կարող մասնակցել գործի քննությանը: Դատարանը լսելով պաշտպանի հայտարարությունը նշում է, որ պաշտպանների կողմից դատական նիստերի դահլիճը լքելը դիտվելու է որպես դատարանին չենթարկվել, դատական նիստերի բնականոն ընթացքը խոչընդոտել, ինչը հանգեցնելու է դատական սանկցիայի: Պաշտպանները այնուամենայնիվ առանց թույլտվության լքում են դատական նիստերի դահլիճը, որը հանգեցնում է դատական սանկցիայի:

Վերլուծելով նշված քրեական գործով դատական նիստի ընթացքում կատարվածը, այդ թվում նաև մինչև դատական նիստերի դահլիճից հեռանալը փաստաբան Տիգրան Եգորյանի կողմից արված հայտարարությունը, կարելի է եզրակացնել, որ պաշտպաններ Տիգրան Եգորյանի և Դավիթ Գյուրջյանի կողմից դատական նիստերի դահլիճից հեռանալու հիմնական պատճառը հանդիսացել է այն, որ Դատարանը դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ դատական նիստերի դահլիճից հեռացրել է ամբաստանյալին և վերջինս ավարտին չի կարողացել հասցնել իր միջնորդությունը:

Խորհուրդն արձանագրում է, որ սույն դեպքում պաշտպաններ Տիգրան Եգորյանի և Դավիթ Գյուրջյանի դատական նիստերի դահլիճից առանց դատարանի թույլտվության հեռանալը բխել է վստահորդի շահերից: Պաշտպանները գործել են հարկադրաբար, որպեսզի այդ կերպ ապահովեն իրենց վստահորդի մասնակցությունը (ոչ միայն ֆիզիկական, այլ նաև գործուն, հաշվի առնելով, որ վերջինիս միջնորդությունն ըստ էության ավարտին չհասցվեց) հետագա դատական նիստերին: Պաշտպանները գործել են վստահորդի շահերի պաշտպանության կարևորությունից ելնելով՝ հաշվի առնելով, որ իրենց վստահորդի բացակայությամբ դատական նիստին մասնակցելը այս դեպքում կարող էր դիտվել որպես վստահորդի շահերին հակասող գործողություն: Խորհուրդն այս եզրահանգման է գալիս հաշվի առնելով պաշտպանների հեռանալուն նախորդող իրադարձությունները, հատկապես այն, որ՝ դատարանը Վարդգես Գասպարիին հնարավորություն չի տալիս միջնորդություն ներկայացնելու իրավունքն իրացնել:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 10.03.2016թ. թիվ թիվ 86-Ա/ԿԳ-16054 որոշմամբ փաստաբաններ Տիգրան Եգորյանի (արտոնագիր թիվ՝ 1187) և

Դավիթ Գյուրջյանի (արտոնագիր թիվ՝ 1897) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1. կետի պահանջների խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան